ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2025-2026 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. «Նախնական զինվորական պատրաստության» առարկայական օլիմպիադան (այսուհետ՝ օլիմպիադա) կազմակերպվում և անցկացվում է 3 փուլով՝ առաջին (դպրոցական), երկրորդ (մարզային) և երրորդ (հանրապետական)։

2. Օլիմպիադան անցկացվում է ըստ խմբերի։ 1-ին խումբ՝ 9-րդ դասարան, 2-րդ խումբ՝ 10-րդ դասարան, 3-րդ խումբ՝ 11-12-րդ դասարաններ։

3. Օլիմպիադայի երեք փուլերի թեստային առաջադրանքները կազմում է հանրապետական հանձնաժողովը։

4. Օլիմպիադան կազմակերպելու և անցկացնելու համար դպրոցի տնօրենի հրամանով ձևավորվում է հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են ուսումնական հաստատության ուսումնական գծով փոխտնօրենը, տվյալ մեթոդական մասնախմբի նախագահը, զինղեկը, ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչ/ներ/ը և տվյալ մասնախմբի մյուս անդամները։

5. Թեստային առաջադրանքների կազմակերպման և անցկացման համար ուսումնական հաստատության տնօրենի հրամանով ձևավորվում է հանձնաժողով, որի կազմում չի կարող ընդգրկվել ՆԶՊ առարկայի մասնագետ/ներ/։

6. Մրցաձևերի անցկացման համար հանձնաժողովի կողմից կարող են հրավիրվել մրցավարներ։

7. Օլիմպիադայի դպրոցական և մարզային փուլերն անցկացվում են երկու օրվա ընթացքում։ Մրցաձևերի բաշխումը, ըստ օրերի, ընտրում է հանձնաժողովը[1]։

8.Օլիմպիադայի դպրոցական և մարզային փուլերը ընդգրկում են թեստային առաջադրանք և վեց մրցաձև[2].

8.1.Թեստային առաջադրանք

Թեստային առաջադրանքի համար տրվում է 90 րոպե ժամանակ։

Գնահատումը կատարվում է 20 միավորային համակարգով։

Բոլոր առաջադրանքներն ունեն մեկ ճիշտ պատասխան։

Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 (մեկ) միավոր։

8.2. Կրակային պատրաստություն (հրաձգություն օդամղիչ հրացանից)

Հրաձգությունը կատարվում է 7 մետր հեռավորությունից կանգնած դրությունից (հենարանին հենված դիրքից)։ Թիրախ № 7։

Կատարվում է 2 փորձնական և 3 ստուգիչ կրակոց։

8.3. Ինքնաձիգի ոչ լրիվ քանդում-հավաքում

Վարժության կատարման հերթականությունը՝ քանդել և հանել պահեստատուփը, լիցքավորել ինքնաձիգը փողը դեպի վեր 45^0, կատարել ստուգիչ կրակոց, հանել շամփուրը, հանել պատկանելիքը, հանել փողատուփի կափարիչը, հանել հետադարձ մեխանիզմը, հանել փակաղակի շրջանակը, փակաղակի շրջանակից անջատել փակաղակը, բացել փողի պահպանակը, հանել գազային խողովակը։ Հավաքել հակառակ հերթականությամբ։

Առաջադրանքի կատարման հերթականության խախտման դեպքում մրցավարի կողմից արձանագրվում և նշվում է կատարած խախտումը։ Յուրաքանչյուր խախտման համար հիմնական ժամանակին ավելացվում է տուգանային 5 (հինգ) վայրկյան։

---

[1].Օլիմպիադայի անցկացման 1-ին օրը առաջին հերթին անցկացվում են թեստային առաջադրանքները և մի քանի մրցաձևեր, իսկ մյուս մրցաձևերն անցկացվում են հաջորդ օրը։

[2].ՆԶՊ օլիմպիադայի դպրոցական և մարզային փուլերի համար նախատեսվում են՝ 1.«Թեստային առաջադրանք», 2.«Հրաձգություն օդամղիչ հրացանից», 3.«Ինքնաձիգի ոչ լրիվ քանդում և հավաքում», 4.«Զգումներ պտտաձողից և հրումներ պառկած դրությունից», 5.«Կրոսավազք», 6.«Ռազմական տեղագրություն», իսկ հանրապետական փուլի համար օլիմպիադայի դպրոցական և մարզային փուլերի բոլոր մրցաձևերի հետ միասին նախատեսված են 7.«Շարային պատրաստություն» և 8.«Նռնակի նետում» մրցաձևերը։

8.4. Ձգումներ պտտաձողից և հրումներ պառկած դրությունից

– **Ձգում պտտաձողից (կատարում են տղաները)**

Տղաները վարժությունը կատարում են կախ դրությունից, ձեռքերի բռնվածքը՝ ափերը դուրս, ոտքերի թաթերը ձգված վիճակում: Վարժությունը համարվում է կատարված միայն այն դեպքում, երբ վերձգման ժամանակ մասնակցի ծնոտը հավասարվում է պտտաձողին: Մասնակցում են տղաները

– **Հրումներ՝ պառկած դիրքից (կատարում են աղջիկները)**

Աղջիկները վարժությունը կատարում են հատակից 30 սմ բարձրության հենարանին հենված, ձեռքերը զատած, ոտքերը միասին: Վարժությունը համարվում է կատարված միայն այն դեպքում, երբ ձեռքերը ամբողջությամբ ծալված և բացված են լինում:

8.5. Կրոսավազք

(1000 մ): Մրցումն անցկացվում է՝ համաձայն աթլետիկայի կանոնակարգի: Մասնակցում են տղաները:

(500 մ): Մրցումն անցկացվում է՝ համաձայն աթլետիկայի կանոնակարգի: Մասնակցում են աղջիկները:

8.6.Ռազմական տեղագրություն (հորիզոնի կողմերի որոշումը առանց քարտեզի)[3]:

1.Կողմնորոշում Արևով և ժամացույցով (գտնում է հորիզոնի հարավային կողմը և շարժվում է հուշաթերթիկում[4] նշված ուղղությամբ, հասնում է նախատեսված վայրը):

2.Կողմնորոշվել Բևեռային Աստղով (գտնում է Բևեռային աստղը, որոշում է հորիզոնի կողմերը և շարժվում է հուշաթերթիկում տրված ուղղությամբ և հասնում է նախատեսված վայրը):

3.Կողմնորոշվել կողմնացույցով (գործարկում է Ադրիանովի կողմնացույցը որոշում է հյուսիսը, որոշում է հուշաթերթիկում տրված՝ դեպի կողմնորշիչը տանող ուղղությունը, շարժվում է այդ ուղղությամբ և հասնում է նախատեսված վայրը):

Գնահատումը կատարվում է՝ համաձայն ստորև բերված գնահատման աղյուսակի.

№	Գնահատվող գործողությունը	Գնահատում	
1	Կողմնացույցը գործարկելը[5]	1	5
	Տրված ուղղության որոշելը	2	
	Տրված ուղղությամբ նախատեսված վայր հասնելը	2	
2.	Ժամացույցի սլաքը տեղադրում է դեպի Արեգակը[6]	1	5
	Մտովի կիսվող անկյունը ընտրելը	2	
	Տրված ուղղության որոշելը և նախատեսված վայր հասնելը	2	
3.	«Մեծ Արջ» համաստեղությունը գտնելը	2	5
	«Բևեռային աստղը» գտնելը	2	
	Տրված ուղղությունը որոշելը և նախատեսված վայր հասնելը	1	

Ուշադրություն:

1. Թեստային առաջադրանքների պատասխանների թերթիկները և մրցաձևերի արդյունքները հանձնաժողովի կողմից լրացվում է ուղեցույցին կից ներկայացված ամփոփագրում (EXCEL-ի ֆայլում) և մինչև ս.թ. **դեկտեմբերի 2**-ը էլփոստի օգնությամբ ուղարկվում է մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) կրթության բաժին:
2. Մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) կրթության բաժնից ամփոփագրի ամբողջական տեղեկությունը փոխանցվում է **info@olymp.am** էլփոստին մինչև ս. թ. **դեկտեմբերի 5**-ը:

---

[3].Բևեռային աստղով, Արևով և ժամացույցով կողմնորոշումները անց են կացվում եղանակային բարենպաստ պայմանների առկայության դեպքում:

[4]. Հուշաթերթիկը պատրաստում է տվյալ փուլի հանձնաժողովը, որի մեջ նշվում է շարժման ուղղությունը (հյուսիս, հարավ, արևելք, արևմուտք, հարավ-արևմուտք և այլն):

[5].Արգելակից հանելը և հյուսիսային ուղղությունը որոշելը:

[6].Ընտրում է Արեգակի հետ համընկնող սլաքը: